ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը 2019 թ. հայտարարում է հայագիտական ուսումնասիրությունների նախագծերի մրցույթ, որոնք պետք է նպատակաուղղված լինեն հայագիտության բնագավառում կարևոր, արդիական հնչեղություն ունեցող խնդիրների լուծմանը.

Առաջարկվում է առավել ուշադրություն դարձնել հայագիտության հետևյալ ուղղություններին.

ա) 21-րդ դարի հայագիտության մարտահրավերները,

բ) Ցեղասպանության հետևանքների հաղթահարման խնդիրներ՝ «Ճանաչումից հատուցում» հայեցակարգի շրջանակներում,

գ) Արտասահմանում գտնվող հայագիտական աղբյուրագիտական ժառանգության ուսումնասիրության հիմնախնդիրներ,

դ) Արցախի պատմական անցյալի հետազոտման և մշակութային արժեքների պահպանման գերակայությունները,

ե) Հայոց պետականության զարգացման արդի փուլը, պատմական դասերը և հեռանկարները։

ՀՈՒՖՀ հիմնադրամին ներկայացված ծրագրերի կատարման համար տրվում է 1 տարի ժամանակ։

Ներկայացվող ծրագրերում պետք է առանձնացվեն փուլեր՝ նշելով դրանց իրականացման ժամկետներն ու առաջադրանքները, ֆինանսավորման ծավալները՝ համապատասխան հաշվարկներով ու հիմնավորումներով.

Նախագիծը կարող են իրականացնել ինչպես մեկ գիտական խումբ՝ իր ղեկավարով և աշխատակիցներով, այնպես էլ անհատ գիտնականներ.

Սույն հայտարարությունը տպագրելուց մեկ ամիս անց մրցութային հանձնաժողովը կսկսի աշխատանքները.

Մանրամասն տեղեկությունների համար դիմել՝ք. Երևան, Բաղրամյան 24, 40 սենյակ

Էլ.փոստ info@haygithimnadram.am

հեռախոս.+(374 10) 52 13 62

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ